

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 փետրվարի 2006 թվականի N 129-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բնակելի շենքերի գազաֆիկացման հետ կապված հարաբերությունները կարգավորելու, գազասպառման համակարգերի և մարդկանց անվտանգությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում բնակելի շենքերի գազաֆիկացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից 3-ամսյա ժամկետում ոլորտին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից ընդունված իրավական ակտերը համապատասխանեցնել սույն որոշման պահանջներին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետությունում բազմաբնակարան շենքերի գազիֆիկացումը և գազամատակարարումը վերականգնելու մասին» N 11 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում բազմաբնակարան շենքերի, առանձնատների և բնակելի այլ շենքերի (այսուհետ՝ բնակելի շենքերի) գազաֆիկացման հետ կապված գործընթացները և սահմանվում են նախկինում կառուցված ու չգազաֆիկացված բնակելի շենքերի գազաֆիկացմանը ներկայացվող պահանջները:

2. Սույն կարգի պահանջները չեն տարածվում նախկինում գազաֆիկացված բնակելի շենքերի գազամատակարարման վերականգնմանը, նոր կառուցվող բնակելի շենքերի (թաղամասերի) գազաֆիկացմանը:

Նախկինում գազաֆիկացված բազմաբնակարան շենքերի գազամատակարարման համակարգերի վերականգնման գործընթացները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 2024-Ն որոշմամբ:

Քանդման ենթակա՝ չորրորդ և հինգերորդ աստիճանի վնասվածություն ունեցող բնակելի շենքերի գազաֆիկացումը չի թույլատրվում:

Վերականգնման-ուժեղացման ենթակա՝ երրորդ աստիճանի վնասվածություն ունեցող բնակելի շենքերի գազաֆիկացումը կարող է իրականացվել այդ շենքերի վերականգնման-ուժեղացման աշխատանքներն սկսելուց ոչ շուտ:

3. Բնակելի շենքերի գազաֆիկացումն իրականացվում է համայնքների, բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների, բնակիչների խմբի, առանձին բնակիչների նախաձեռնությամբ և գազամատակարարի զարգացման ծրագրերով:

4. Համայնքների, բնակելի թաղամասերի և բնակելի շենքերի խմբերի գազաֆիկացման նախաձեռնման ժամանակ պետք է հաշվի առնվեն համայնքների, բնակելի թաղամասերի կառուցապատման նախագծերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի ջերմամատակարարման ոլորտի բարեփոխումների մասին» N 1384-Ն որոշման դրույթները:

5. Բնակելի շենքերի գազաֆիկացումն իրականացվում է գազամատակարարի կողմից տրված տեխնիկական պայմաններին և դրանց հիման վրա սահմանված կարգով մշակված նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան:

6. Բնակելի շենքերի գազամատակարարման ցանցերի նախագծման և կառուցման աշխատանքներն իրականացնում են այդ աշխատանքների կատարման լիցենզիա ունեցող կազմակերպությունները՝ պահպանելով գազամատակարարման համակարգերի տեխնիկական կանոնակարգերի, բնապահպանական, հրդեհային անվտանգության, շինարարական և սանիտարական նորմերի ու կանոնների պահանջները:

7. Բնակելի շենքերի ներտնային գազասպառման համակարգերի նախագծման, կառուցման և տեխնիկական սպասարկման աշխատանքների իրականացումը համակարգում է գազամատակարարը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, տեխնիկական կանոնակարգերով և բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններով (այսուհետ՝ ԳՄՕԿ) սահմանված նորմերի պահանջները:

Տիպային նախագծերով կառուցված բազմաբնակարան շենքերի համար կարող են կիրառվել բազմակի օգտագործման համար մշակված տիպային նախագծային լուծումներ:

Ներտնային գազասպառման համակարգերի շինարարությունը դասակարգվում է որպես շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանք:

8. Բնակելի շենքերի գազամատակարարումը կարող է իրականացվել հետևյալ պայմանների ապահովման դեպքում՝

ա) տեղադրվող **գազասարք**ները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին և ունենան գազի հոսքի անջատման ինքնաշխատ սարքավորում,

բ) գազասպառման համակարգում տեղադրվող բոլոր չափման միջոցները պետք է լինեն տեսակը հաստատված, ստուգաչափված և թույլատրված կիրառման Հայաստանի Հանրապետությունում,

գ) տեխնիկական կանոնակարգերով և շինարարական նորմերով սահմանված կարգով պետք է ունենան օդափոխության և ծխահեռացման համակարգեր՝ ջեռուցման և տաք ջրամատակարարման **գազասարք**երի տեղադրման դեպքում,

դ) գազամատակարարման պայմանագրի և նրա անբաժանելի մաս հանդիսացող ներտնային գազասպառման համակարգի սպասարկման համաձայնագրի առկայության դեպքում:

9. Բազմաբնակարան շենքերում ջեռուցման նպատակով առանց ուղղաձիգ ծխատարի կարող են տեղադրվել միայն այրման հերմետիկ խցով **գազասարք**եր՝ տեխնիկական կանոնակարգերով և շինարարական նորմերով սահմանված պահանջների պահպանման դեպքում: Ընդ որում, փոքր հզորության (մինչև 7 կՎտ) այրման հերմետիկ խցով ջեռուցման **գազասարք**ները կարող են տեղադրվել առանց շինարարական նորմերով նախատեսված սահմանափակումների:

10. Ներտնային գազասպառման համակարգի անվտանգ շահագործման նկատմամբ հսկողությունն իրականացնում է գազամատակարարը՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով, իսկ դրա նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության

կառավարության լիազորած պետական կառավարման մարմինները՝ օրենքով սահմանված կարգով և իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում: